

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 14-05-2020 թ. որոշմամբ
 «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ 21/1-5 ՃԿա	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.00252	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2003-12-24	
1.5 ՀՎՀՀ-ն	02570903	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)97269726	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	tufenkian.org	
1.8 Էլեկտրոնային փոստը	info@tcf.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Թուֆենկյան ֆաունդեյշն ինկ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Ջելմա Ֆրենսիս Թուֆենկյան		
Դելիդ Թուֆենկյան		
Դայանա Հոդջես		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ռաֆֆի Դուդակյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	բարեգործական ծրագրեր	303,772,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Ընտանիք և համայնք» սոցիալ-կրթական ծրագիր	37,740,000	
Հանքարդյունաբերորեն սղրության բարեփոխումների մշակում	53,490,000	
Կանանց աջակցման և իրավունքների պաշտպանության ծրագիր	113,741,000	
Կրթական ծրագիր	10,011,000	
Մշակութային ծրագիր	26,275,000	
Ֆիզանձանց տրված օգնություն	11,661,000	
բնապահպանական ծրագիր	13,820,000	
լրատվական հարթակի զարգացում	12,102,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	321,615,000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	278,840,000	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 40 էջերից:
 էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

Cash flow

«Թուֆենկյան» Բարեգործական Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2019թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն.....	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	8

Անկախ ատղիտորական եզրակացություն

«Թուֆենկյան» Բարեգործական Հիմնադրամի ղեկավարությանը և հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք ատղիտի ենք ենթարկել «Թուֆենկյան» Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2019թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Թուֆենկյան» Բարեգործական Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք ատղիտում իրականացրել ենք Ատղիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության «Ատղիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների ատղիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր ատղիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան ատղիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

ASATRYANS LLC
Sakharov Business Center,
48/1 Nalbandyan street, 5th floor,
Yerevan 0010, Armenia
T: + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
E-mail: general@asatryans.com
www.asatryans.com

ԱՄՏՏԲՑԱՆ ՍՊԸ
Սախարով Բիզնես-Կենտրոն,
Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0010
Հ. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
Էլ. huug@general@asatryans.com
www.asatryans.com

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման արևդիատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյեք առկա է էական

անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ռոջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ռոջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

14 մայիսի 2020թ.

Սերգեյ Ասատրյան

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն

Առաջադրանքի պատասխանատու

ԱՄՍՏՐՅԱՆՍ ՍՊԸ (Կրեստոն Գրենիա)

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն



«Թուֆենկյան» Բարեգործական Հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններ
2019թ. դեկտեմբերի 31

Հոգաբարձուների խորհրդի կազմը

Ջեյնա Ֆ. Թուֆենկյան
Խորհրդի նախագահ

Դեվիդ Ֆ. Թուֆենկյան
Խորհրդի անդամ

Դայանա Լ. Հոդջես
Խորհրդի անդամ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծնթ.		
Եկամուտ շնորհներից	4	316,323	77,303
Այլ եկամուտ	5	6,812	5,673
		323,135	82,976
Ծրագրերի իրականացման ծախսեր	6	(278,840)	(55,687)
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին	7	(15,214)	(9,028)
Մաշվածություն և ամորտիզացիա		(6,419)	(6,116)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(6,169)	(5,220)
Առդիտորական և խորհրդատվական ծախսեր		(3,425)	(1,940)
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր		(257)	-
Այլ ծախսեր		(11,291)	(3,857)
Գործառնական գործունեության արդյունք		1,520	1,128
Այլ ֆինանսական հոդվածներ	8	(158)	7
Տարվա արդյունք մինչև հարկերը		1,362	1,135
Շահութահարկի գծով ծախս	9	(1,362)	(1,135)
Տարվա արդյունք		-	-
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2020թ.-ի մայիսի 14-ին՝

Ռաֆֆի Դուդակյան

Գործադիր տնօրեն



Գրախոս Թորոնթոն Լիզալ ընդ Թաքս ՍԴԸ
 Արսև Կարսեյան
 Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	10	29,043	33,450
Ոչ նյութական ակտիվներ	11	2,053	2,313
		31,096	35,763
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	497	2,688
Ընթացիկ շահութահարկի կանխավճար		-	75
Դրամական միջոցներ և համարժեքներ	13	24,652	17,898
		25,149	20,661
Ընդամենը ակտիվներ		56,245	56,424
Հիմնադրին վերագրելի գուտ արդյունք		320	320
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Հետաձգված եկամուտ	14	31,096	35,763
		31,096	35,763
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	458	2,668
Հետաձգված եկամուտ	14	22,075	15,900
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		1,362	1,135
Պահուստներ	16	934	638
		24,829	20,341
Ընդամենը պարտավորություններ		55,925	56,104
		56,245	56,424

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Թուֆենկյան Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է 2003թ. հոկտեմբերի 31-ի տնօրենների խորհրդի որոշմամբ և գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2003թ.-ի դեկտեմբերի 24-ին:

Հիմնադրամը հիմնադրվել է Թուֆենկյան Ֆաունդեյշն Ինկ.-ի (ԱՄՆ իրավունքի ընկերություն, գրանցված Նյու-Յորք նահանգում) կողմից:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է Ջ.Ֆ.Թուֆենկյանը:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է Թումանյան փ. 21/1շ., բն.5:

Հիմնադրամի նպատակներն են՝

- աջակցություն նյութական և հոգևոր կարիքները ինքնուրույն հոգալ չկարողացող անձանց,
- աջակցություն առողջապահության և գյուղատնտեսության զարգացմանը,
- ՀՀ-ում և այլուր աշխատատեղերի բացման և կարիքավոր գործազուրկների վերապատրաստման խթանում,
- աջակցություն գիտության, արվեստի, կրթության և գրականության զարգացմանը,
- շրջակա միջավայրի ,պատմական , ճարտարապետական, մշակույթի և արվեստի հուշարձանների պահպանում և վերականգնում,
- տարերային աղետների հետևանքով, տուժած անձանց նյութական և այլ անհրաժեշտ օգնության ցուցաբերում և տարերային աղետների հետևանքների վերացում:

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը հիմնադիրների խորհուրդն է, որն ընտրում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմված է երեք անդամից:

Աշխատողների միջին ցուցակային թիվը 2019թ.-ին կազմել է 4 մարդ (2018թ.-ին՝ 3 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար:

Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման

քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2 Ծանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

Հիմնադրամն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- չեն ճանաչել հողվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՖՀՄ-ով թույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՖՀՄ-ով,

ՖՀՄ-ն կիրառվել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները չափելիս:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին:

2.5 Հիմնադրամի կողմից ընդունված նոր և փոփոխված ՖՀՄ ստանդարտներ, որոնք ընդունվել են ընթացիկ տարում

Հիմնադրամը, սկսած 2019թ. հունվարի 1-ից պատրաստվող տարեկան ֆինանսական հաշվետվություններում, առաջին անգամ կիրառել է հետևյալ ստանդարտները և փոփոխությունները՝

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ		Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան Ժամանակաշրջանների համար		
		Նկարագրություն	Կիրառությունը	Հետոնքաց
ՖՀՄՍ 16		Վարձակալություններ	2019թ. հունվարի 1	

ՖՀՄՍ 16. «Վարձակալություններ»

ՖՀՄՍ 16-ը փոխարինել է ՀՀՄՍ 17. «Վարձակալություններ», ՖՀՄՄԿ 4. «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ 15. «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27. «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»: Ստանդարտը սահմանում է վարձակալությունների ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները, և վարձատուներից պահանջվում է ճանաչել վարձակալության մեծ մասը հաշվեկշռում:

ՖՀՄՍ 16 ներկայացնում է վարձակալության պայմանագրերի և հաշվապահական հաշվառման վարման համապարփակ մոդել երկու կողմերի համար՝ վարձակալի և վարձատուի մոտ: Այն վարձակալի մոտ ներկայացնում է էական փոփոխություններ՝ բացառելով գործառնական և ֆինանսական վարձակալության միջև տարբերությունը, պահանջում է օգտագործման իրավունք ունեցող ակտիվի ճանաչում և բոլոր նոր սկսվող վարձակալությունների գծով վարձակալության պարտավորության՝ «Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով» ճանաչում, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Ի տարբերություն վարձակալի մոտ հաշվապահական հաշվառման վարման, վարձատուի մոտ հաշվապահական հաշվառման պահանջները հիմնականում մնացել են անփոփոխ:

ա) Վարձակալության նոր սահմանման ազդեցությունը

Հիմնադրամը գործնական նպատակահարմարությունից ելնելով, չի վերագնահատել արդյոք պայմանագրերը վարձակալություն են կամ պարունակում է արդյոք վարձակալության տարր, ինչը թույլատրվում է ՖՀՄՍ 16-ին անցման ժամանակ (ՖՀՄՍ 16-ի առաջին անգամ կիրառման պահին): Համապատասխանաբար, վարձակալության սահմանումը, համաձայն ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի, կշարունակի կիրառվել մինչև 2019թ. հունվարի 1-ը կնքված կամ մինչև նշված ամսաթիվը փոփոխված պայմանագրերի վրա:

Վարձակալության սահմանման մեջ հիմնական փոփոխությունը վերաբերվում է վերահսկողության հասկացությանը: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, արդյոք պայմանագիրը պարունակում է վարձակալություն, ելնելով այն բանից, արդյոք Հիմնադրամը իրավունք ունի վերահսկել տվյալ իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործումը, որոշակի ժամանակահատվածի ընթացքում, փսխատուցման դիմաց: Սա հակասում է ՀՀՄՍ 17-ում և ՖՀՄՄԿ 4-ում մատնանշված «դիսկերի և օգուտների» շեշտադրմանը:

Հիմնադրամը ընդունել է վարձակալության սահմանումը և կից ուղեցույցները, որոնք նշված են ՖՀՄՍ 16-ում, բոլոր այն պայմանագրերի կամ դրանց փոփոխությունների մասով, որոնք կատարվել են կամ կնքվել են 2019թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո: ՖՀՄՍ 16-ի առաջին անգամ ընդունման կամ կիրառման ժամանակ Հիմնադրամը իրականացրել է սույն ստանդարտի ներդրման ծրագիր (պրոյեկտ): Ներդրման պրոյեկտը ցույց է տալիս, որ ՖՀՄՍ 16-ով նոր սահմանումը էականորեն չի փոփոխելու

պայմանագրերի շրջանակը, որոնք բավարարում են Հիմնադրամի վարձակալության սահմանմանը:

բ) Վարձակալի հաշվապահական հաշվառման վրա ազդեցությունը

Համաձայն նախկին ստանդարտի (ՀՀՄՍ 17), ՖՀՄՍ 16-ը փոխում է Հիմնադրամում վարձակալության հաշվապահական հաշվառումը, որոնք նախկինում ՀՀՄՍ 17-ով դասակարգվել են գործառնական վարձակալություն՝ դուրս մնալով՝ չներառվելով, հաշվապահական հաշվեկշռում:

ՖՀՄՍ 16-ի կիրառման ժամանակ, Հիմնադրամը բոլոր վարձակալությունների մասով (բացառությամբ վերոնշյալ դեպքերի) պետք է՝

- Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչում որպես ակտիվ և Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության ճանաչում Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում (ՖԴ-ՄՀ), որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են ապագա վարձավճարների ներկա արժեքով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում և ներկայացվում են առանձին հոդվածով
- Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի գծով մաշվածության ճանաչում և Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության տոկոսների ճանաչում Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում
- Վարձակալական գծով լրացուցիչ պարտավորության ճանաչում և ներառում Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով կամ Տոկոսային վարկեր և փոխառությունները պարտավորություններում
- «Կանխավճարներ» և «Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր» հոդվածներում ներառված նախկին գործառնական վարձակալության հոդվածները ապաճանաչի
- «Հետաձգված հարկային պարտավորությունները» այս մասով նվազեցնել, որը պայմանավորված է ակտիվ ճանաչված վարձակալության և պարտավորություն հետևանքով հետաձգված հարկի ազդեցության փոփոխության հետ
- Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում առանձնացված ներկայացնի վարձակալության մայր գումարի վճարումն ու տոկոսները (որոնք ներառված են ֆինանսական գործունեության մեջ): ՖՀՄՍ 16-ի համաձայն վարձակալները պետք է ներկայացնեն դրամական միջոցների վճարումները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, ֆինանսական գործունեության հոդվածում (Գործառնական գործունեությունից ֆինանսական գործունեություն): ՖՀՄՍ 16-ի ընդունումը ոչ մի ազդեցություն չի ունեցել դրամական միջոցների զուտ հոսքերի վրա:

Վարձակալության արտոնությունները (օրինակ՝ առանց վարձավճարի ժամանակահատված) պետք է ճանաչվեն օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության չափման մի մաս:

ՖՀՄՍ 16-ի համաձայն օգտագործման իրավունքի ձևով ակտիվները արժեզրկման ստուգման են ենթարկվում համաձայն ՀՀՄՍ 36. «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի:

Կարճաժամկետ վարձակալությունների դեպքում (երբ վարձակալության ժամկետը մինչև 12 ամսի կամ ավելի կարճ է) և փոքրարժեք վարձակալած ակտիվների դեպքում (ինչպիսիք

են օրինակ՝ սեղանները և համակարգիչները, փոքրարժեք գրասենյակային կահույքը և հեռախոսները), Հիմնադրամը ընկերությունը որոշել է ճանաչել վարձակալության գծով ծախսը գծային մեթոդով, ինչը թույլատրվում է ՖՀՄՍ 16-ով: Այս ծախսը ներկայացված է Ծահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում «Այլ ծախսեր» հոդվածում:

զ) Վարձակատուի հաշվապահական հաշվառման վրա ազդեցությունը

ՖՀՄՍ 16-ը էականորեն չի փոփոխել հաշվապահական հաշվառումը վարձատուի մոտ: ՖՀՄՍ 16-ի համաձայն, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալության տված գույքը կամ ֆինանսական վարձակալություն կամ գործառնական վարձակալություն և այս երկու տեսակի վարձակալությունների համար առանձին է վարում հաշվառումն:

Այնուամենայնիվ ՖՀՄՍ 16-ը փոխել և ընդլայնել է պահանջվող բացահայտումները, մասնավորապես ինչպես է վարձատուն կառավարում ռիսկերը՝ կապված վարձով տրված ակտիվների իր մասով մնացորդի գծով:

Համաձայն ՖՀՄՍ 16-ի, միջանկյալ վարձատուն (ենթավարձակալություն) պետք է այս երկու պայմանագրերը՝ վարձակալած ակտիվներ և վարձով տրված ակտիվներ, առանձին հաշվառի, որպես առանձին պայմանագրեր: Միջանկյալ վարձատուն պետք է դասակարգի ենթավարձակալությունը, որպես ֆինանսական կամ գործառնական հիմնվելով գլխավոր պայմանագրից բխող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչման վրա (այլ ոչ թե այնպես, ինչպես նշված էր ՀՀՄՍ 17-ում):

Այս փոփոխությունների համաձայն Հիմնադրամը վերադասակարգել է իր որոշ ենթավարձակալական պայմանագրեր, որպես ֆինանսական վարձակալություն: ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի համաձայն ակնկալվող վնասների գծով պահուստը ճանաչվել է ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերում:

Ստորև ներկայացված է ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցությունը.

Ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա.

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	29,043	-	29,043
Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	29,043	-	29,043
Հիմնադրին վերագրելի գուտ արդյունք	320	-	320
	320	-	320
Պարտավորություններ			
Պահուստներ	934	-	934
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	458	-	458
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	1,392	-	1,392
	1,713	-	1,713

«Թուֆենկյան» Բարեգործական Հիմնադրամ
 Ֆինանսական հաշվետվություններ
 2019թ. դեկտեմբերի 31

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	33,450	-	33,450
Դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	567	-	567
Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	34,017	-	34,017
Հիմնադրին վերագրելի գուտ արդյունք	320	-	320
	320	-	320
Պարտավորություններ			
Պահուստներ	638	-	638
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,668	-	2,668
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	3,306	-	3,306
	3,626	-	3,626

2018թ. հունվարի 01-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	38,842	-	38,842
Դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	-	-	-
Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	38,842	-	38,842
Հիմնադրին վերագրելի գուտ արդյունք	320	-	320
	320	-	320
Պարտավորություններ			
Պահուստներ	508	-	508
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,208	-	1,208
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	1,716	-	1,716
	2,036	-	2,036

Ազդեցությունը շահույթի կամ վնասի մասին հաշվետվության վրա.

2019թ.

Հազար դրամ	Առանց ՖՀՄՄ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՄ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Եկամուտ շնորհներից	316,323	-	316,323
Այլ եկամուտ	6,812	-	6,812
	323,135	-	323,135
Ծրագրերի իրականացման ծախսեր	(278,840)	-	(278,840)
Վարչական ծախսեր	(42,775)	-	(42,775)
Գործառնական շահույթ	1,520	-	1,520
Այլ ֆինանսական հոդվածներ	(158)	-	(158)
Շահութահարկի գծով ծախս	(1,362)	-	(1,362)
	-	-	-

2018թ.

Հազար դրամ	Առանց ՖՀՄՄ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՄ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Եկամուտ շնորհներից	77,303	-	77,303
Այլ եկամուտ	5,673	-	5,673
	82,976	-	82,976
Ծրագրերի իրականացման ծախսեր	(55,687)	-	(55,687)
Վարչական ծախսեր	(26,161)	-	(26,161)
Գործառնական շահույթ	1,128	-	1,128
Այլ ֆինանսական հոդվածներ	7	-	7
Շահութահարկի գծով ծախս	(1,135)	-	(1,135)
	-	-	-

Հիմնադրամի ղեկավարությունը չի կանխատեսում, որ այս փոփոխությունների կիրառումն էական ազդեցություն կունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընթացիկ տարում Հիմնադրամը կիրառել է ՀՀՄՄ կողմից թողարկված ՖՀՄՄ մի շարք փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք գործում են 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Դրանց ընդունումը որևէ էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների կամ բացահայտումների վրա:

ՖՀՄՄ, ՀՀՄՄ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար
<p>Փոփոխություններ ՖՀՄՄ 9. <i>«Կանխավճարի հատկանիշներ՝ բացասական փոխհատուցմամբ»</i> ստանդարտում</p>	<p>ՖՀՄՄ 9-ի փոփոխությունները հստակեցնում են, որ գնահատելու համար, թե արդյոք կանխավճարի հատկանիշը բավարարում է «բացառապես մայր գումարի և տոկոսների վճարումներ» (SPPI) չափանիշին, օպցիոնն օգտագործող կողմը կարող է վճարել կամ կանխավճարի համար ստանալ ողջամիտ փոխհատուցում՝ անկախ կանխավճարի պատճառից: Այլ կերպ ասած, բացասական փոխհատուցմամբ կանխավճարի հատկանիշներ ունեցող ֆինանսական ակտիվները ինքնաբերաբար չեն ձախողում SPPI չափանիշը:</p>	<p>1 Հունվարի, 2019թ.</p>
<p>Փոփոխություններ ՀՀՄՄ 28. <i>«Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում»</i> ստանդարտում</p>	<p>Փոփոխությունները հստակեցնում են, որ ՖՀՄՄ 9-ը՝ տարածվում է ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության այլ ֆինանսական գործիքների վրա, որի նկատմամբ չի կիրառվում բաժնային մեթոդը, ներառյալ դրա արժեզրկման պահանջները: Դրանք ներառում են երկարաժամկետ մասնակցությունը, որն, ըստ էության, ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկությունում զուտ ներդրումների մաս է կազմում:</p>	<p>1 Հունվարի, 2019թ.</p>
<p>Փոփոխություններ ՖՀՄՄ 3. <i>«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»</i> ստանդարտում</p>	<p>Փոփոխությունները հստակեցնում են, որ երբ Հիմնադրամը վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ, Հիմնադրամը կիրառում է փուլերով ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեության միավորման պահանջները՝ ներառյալ համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցության վերաչափումը իրական արժեքով: <u>Նախկինում ունեցած մասնակցությունը</u>, պետք է վերաչափվի, ներառյալ համատեղ գործունեության հետ կապված ցանկացած չճանաչված ակտիվներ, պարտավորություններ և գույքի:</p>	<p>1 Հունվարի, 2019թ.</p>
<p>ՖՀՄՄ 11. <i>«Համատեղ պայմանավորվածություններ»</i> ստանդարտ</p>	<p>Փոփոխությունները հստակեցնում են, որ այն դեպքում երբ ձեռնարկատիրական գործունեություն սահմանվող համատեղ գործունեության մասնակցող կողմերից մեկը, որը, սակայն համատեղ վերահսկողություն չունի համատեղ գործունեության</p>	<p>1 Հունվարի, 2019թ.</p>

**Նշված ամսաթվից կամ
 դրամից հետո սկսվող
 տարեկան
 ժամանակաշրջանների
 համար**

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ

Նկարագրություն

Ոկտոբերի 1-ին, վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության ընդհանուր, ապա Հիմնադրամը համատեղ գործունեությունում մասնակցությունը ունեցած մասնակցությունը չի վերաչափում:

ՀՀՄՍ 12. «Շահութահարկեր»
 ստանդարտ

Փոփոխությունները հստակեցնում են, որ Հիմնադրամը պետք է շահութի կամ վնասի մասին հաշվետվությունում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ կապիտալի հաշվետվություններում ճանաչի շահութաժինների գծով շահութահարկի հետևանքը, կախված այն հանգամանքից, թե որտեղ է Հիմնադրամը ի սկզբանե ճանաչել բաշխման ենթակա շահույթը սկզբնավորող գործարքները: Սա այն դեպքն է, անկախ նրանից, թե հարկային տարբեր դրույթաչափեր են տարածվում բաշխված և չբաշխված շահույթների վրա:

1 Հունվարի, 2019թ.

**ՀՀՄՍ 23. «Փոխառության
 ծախսումներ»** ստանդարտ

Փոփոխությունները հստակեցնում են, որ եթե որակավորվող ակտիվի կառուցման կամ ձեռքբերման համար ստացված հատուկ փոխառությունը դեռևս ունի չմարված մնացորդ և այդ ակտիվը պատրաստ է իր նպատակային օգտագործման կամ վաճառքի համար, ապա փոխառության մնացորդը դիտարկվում է որպես ընդհանուր նպատակով ստացված և ներառվում է կապիտալացման դրույթի հաշվարկի մեջ:

1 Հունվարի, 2019թ.

**Փոփոխություններ ՀՀՄՍ 19.
 «Աշխատակիցների
 հատուցումներ. Պլանի
 փոփոխումը, կրճատումը և
 վերջնահաշվարկը»**
 ստանդարտում

Փոփոխությունները հստակեցնում են, որ անցյալ ծառայության արժեքը (կամ վերջնահաշվարկից օգուտը կամ վնասը) հաշվարկվում է սահմանված հատուցումների գծով պարտավորության (ակտիվի) չափման միջոցով՝ օգտագործելով փոփոխված ենթադրությունները և առաջարկվող հատուցումները համեմատելով պլանի փոփոխությունից (կամ կրճատումից կամ վերջնահաշվարկից) առաջ և հետո, բայց ամենսեղանակ ակտիվի վերին սահմանաչափը (որը կարող է առաջանալ այն դեպքում, երբ սահմանված հատուցումների պլանը ավելցուկային դիրքում է): Փոփոխվել են նաև այն կետերը, որոնք վերաբերում

1 Հունվարի, 2019թ.

ՖՀՄՄ, ՀՀՄՄ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար
ՖՀՄՄԿ 23. «Անորոշություններ շահութահարկը որոշելիս» ստանդարտ	<p>են ընթացիկ ծառայության արժեքի և գուտ սահմանված հատուցումների գծով պարտավորության (ակտիվի) գուտ տոկոսների չափմանը:</p> <p>ՖՀՄՄԿ 23 սահմանում է, ինչպես որոշել հարկային հաշվառման մոտեցումը, երբ առկա են անորոշություններ շահութահարկը որոշելիս: Մեկնաբանությունը պահանջում է.</p> <ul style="list-style-type: none"> • Որոշել, արդյոք անորոշ հարկային հաշվառման մոտեցումը դիտարկվում է առանձին, թե որպես Հիմնադրամ, և • Գնահատել, արդյոք հավանական է, որ հարկային մարմինը կընդունի կազմակերպության կողմից իր շահութահարկի հաշվարկում օգտագործված կամ առաջարկվող անորոշ հարկային հաշվառման մոտեցումը: <ul style="list-style-type: none"> - Եթե այո, Հիմնադրամը հարկային հաշվառման մոտեցումը պետք է որոշի իր շահութահարկի հաշվարկում օգտագործված կամ ապագայում օգտագործվող հարկային հաշվառման մոտեցմանը համապատասխան: - Եթե ոչ, ապա Հիմնադրամը անորոշության ազդեցությունը պետք է արտացոլի հարկային հաշվառման մոտեցումը որոշելիս՝ օգտագործելով կամ ամենահավանական գումար կամ ակնկալվող արժեք մեթոդները: 	1 Հունվարի, 2019թ.

Նոր և վերանայված ՖՀՄՄ ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Հրապարակվել են որոշ հաշվապահական հաշվառման մոր ստանդարտ(ներ) և մեկնաբանություններ, որոնք պարտադիր չեն 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի հաշվետվությունների պատրաստման համար և վաղաժամ չեն կիրառվել Հիմնադրամի կողմից: Նոր ընդունված հաշվապահական ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցության գնահատումը Հիմնադրամի կողմից ներկայացված է ստորև:

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան Ժամանակաշրջան- ների համար	Կիրառությունը
ՖՀՄՍ 17. «Ապահովագրության պայմանագրեր» ստանդարտ	ՖՀՄՍ 17-ը սահմանում է սկզբունքներ ապահովագրական պայմանագրերի ճանաչման, չափման, մերկայացման և բացահայտման համար և փոխարինում է «Ապահովագրության պայմանագրեր» ՖՀՄՍ 4-ին:	1 Հունվարի, 2022թ.	Հետընթաց
ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 (փոփոխություններ)	Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում	Փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ պետք է որոշվի ՀՀՄՍ-ի կողմից:	
Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ չնայած բիզնեսը սովորաբար ունենում է արդյունք, գործունեության և ակտիվների ինտեգրված այդ հավաքածուն պարտադիր չէ որ որակվի որպես <u>բիզնես</u> : Որպեսզի ձեռք բերվող գործունեության և ակտիվների ինտեգրված այդ հավաքածուն համարվի <u>բիզնես</u> , ապա այն պետք է նվազագույնը պարունակի մուտքեր և բովանդակային գործընթաց, որոնք միասին զգալիորեն նպաստում են արդյունքներ ստեղծելու կարողությանը:	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 1. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ՀՀՄՍ 8. «Էականության սահմանումը» ստանդարտներում	Փոփոխությունների նպատակն է միայն տալ էականության տերմինի ավելի հասկանալի սահմանում ՀՀՄՍ 1 ստանդարտում և մտադրություն չկա փոփոխել էականության հասկացությունը ՖՀՄՍ ստանդարտներում: «Անորոշ» էական տեղեկատվություն և ոչ էական տեղեկատվություն հասկացությունները ընդգրկվել են մոր սահմանման մեջ: Օգտագործողների որոշումների վրա ազդող էականության շեմի ազդեցությունը «կարող է ազդել» եզրույթից փոփոխվել է՝ դառնալով « <u>հավանականորեն հնարավոր է ազդեցություն ունենա</u> »: ՀՀՄՍ 8 ստանդարտում էականության սահմանումը փոխարինվել է ՀՀՄՍ 1	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց

	ստանդարտում էականության սահմանման հղումով: Ի լրումն, ՀՀՄՍ-ն փոփոխել է այլ ստանդարտներն ու Հայեցակարգային հիմունքները, որոնք ներառում են էականության սահմանումը կամ հղում են կատարում «էական» տերմինին՝ ստանդարտներին համապատասխանությունը ապահովելու նպատակով:		
Փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային հիմունքներին հղումներում	Վերանայված Հայեցակարգային հիմունքների հետ միասին, որն ուժի մեջ են մտնում 2018թ. մարտի 29-ին հրապարկվելուց հետո, ՀՀՄՍ-ն փոփոխություններ է կատարել նաև ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային հիմունքներին հղումներում: Փաստաթուղթը ներառում է փոփոխություններ ՖՀՄՍ 2, ՖՀՄՍ 3, ՖՀՄՍ 6, ՖՀՄՍ 14, ՀՀՄՍ 1, ՀՀՄՍ 8, ՀՀՄՍ 34, ՀՀՄՍ 37, ՀՀՄՍ 38, ՖՀՄՍԿ 12, ՖՀՄՍԿ 19, ՖՀՄՍԿ 20, ՖՀՄՍԿ 22 և ՄՍԿ 32 ստանդարտներում:	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց

Հիմնադրամի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	479.7	483.75

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները՝ սարքավորումները, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ համաժողովրդական կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	- 20 տարի
Համակարգչային տեխնիկա, գրասենյակային գույք և այլ	- 1-8 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Համակարգչային ծրագրեր և արտոնագրեր	- 10 տարի
Վեբ կայք	- 10 տարի

3.4 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

Հիմնադրամը որպես վարձակալ

Հիմնադրամը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Հիմնադրամը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնադրամը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վարաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ զեղչեր:

Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Հիմնադրամին կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեսթ) ենթարկվեն:

Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Վարձակալության սկսման պահին, Հիմնադրամը կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների իրական արժեքով: Վարձավճարները ներառում են՝ հաստատուն՝ ֆիքսված վճարները (ներառյալ հաստատուն վճարումները), հանած վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխում վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը և գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխում վարձավճարները, որոնք կախված չեն որևէ ինդեքսից կամ տոկոսադրույքներից (ներառում են, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական գների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղենշային տոկոսադրույքից (ինչպես օրինակ՝ LIBOR-ը), ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, որում այդ դեպքերը տեղի են ունեցել:

Վարձավճարների իրական արժեքը հաշվարկելիս, Հիմնադրամը կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշվել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են)՝ տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով հողվածի հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Հիմնադրամի ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Հիմնադրամի բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը ամփոփապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է քիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉԸՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնատիքային չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉԸՎ):

Ֆինանսական պարտավորություններ անորոշագույն արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են անորոշագույն արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉԸՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Հիմնադրամի կողմից, թողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉԸՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉԸՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉԸՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Հիմնադրամը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Հիմնադրամը ոչ փոխանցում է, և ոչ էլ

պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Հիմնադրամը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Հիմնադրամը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Հիմնադրամը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉԸՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Հիմնադրամը ընտրել է ԻԱՉԸՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Հիմնադրամը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Հիմնադրամը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Հիմնադրամը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Հիմնադրամը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով:

«Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Հիմնադրամը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Հիմնադրամը պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Հիմնադրամը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ:

Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Հիմնադրամը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում:

Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 19.1-ում:

3.7 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.8 Ստացված շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռքբերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.9 Ըստիշխանարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի

դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Հիմնադրամը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.10 Ձուտ ակտիվներ

Հիմնադրամը չունի թողարկվող կապիտալի գործիքներ, և համաձայն Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի՝ հոգաբարձուները չեն կարող ունենալ նրա շահույթից բաշխման ակնկալիքներ:

4 Եկամուտ շնորհներից

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Եկամուտներին վերաբերող շնորհներ	309,898	71,187
Ակտիվների վերաբերող շնորհներ	6,425	6,116
	316,323	77,303

5 Այլ եկամուտ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գործառնական վարձակալությունից եկամուտ	6,808	5,673
Այլ եկամուտներ	4	-
	6,812	5,673

6 Ծրագրերի իրականացման ծախսեր

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընտանիք և համայնք/ Մեծամոր	37,740	32,102
Կանանց աջակցման կենտրոն ՀԿ	113,741	-
Ամերիկայի Հայ ավետարանչականների ընկերության Հայաստանի մասնաճյուղ	-	192
Կովկաս-Կասպյան տարածաշրջանի բնիկ ժողովուրդների ինստիտուտ Հիմնադրամ	2,390	-
Ազդրբիզնեսի Հետազոտությունների և Կրթության միջազգային կենտրոն Հիմնադրամ	-	4,800
Սարգիս Մուրադյան մշակութային հիմնադրամ	-	4,320
Հանքարդյունաբերության Օրենսդրության Բարեփոխումների Կենտրոն ՀԿ	53,490	-
Ֆոկուս արվեստի ՀԿ	14,400	-
Ժամանակակից Արվեստի Ինստիտուտ	11,875	-
Ֆիզիկական անձանց տրված օգնություն	11,661	930
Այլ ծրագրեր	33,543	13,343
	278,840	55,687

7 Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատանքի վճարման ծախսեր	14,918	8,898
Աշխատակիցների չօգտագործված արձակուրդային վճարների պահուստ	296	130
	15,214	9,028

8 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից եկամուտներ	16	14
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ծախսեր	(174)	(7)
	(158)	7

9 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(1,362)	(1,135)
Հետաձգված հարկ	-	-
	(1,362)	(1,135)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2018թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՄ)	1,362		1,135	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2018թ.՝ 20%)	272	20.0	227	20.0
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, գում	(1,634)	(120.0)	(1,362)	(120.0)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	(1,362)	(100.0)	(1,135)	(100.0)

10 Հիմնական միջոցներ

	Հոդամասեր	Շենքեր	Համակարգ չային տեխնիկա, գրասենյակ ային գույք և այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	3,800	82,840	7,126	93,766
Ավելացում	-	-	464	464
Օտարում	-	-	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,800	82,840	7,590	94,230
Ավելացում	-	-	1,753	1,753
Օտարում	-	-	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,800	82,840	9,343	95,983
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	(48,240)	(6,684)	(54,924)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(5,470)	(386)	(5,856)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(53,710)	(7,070)	(60,780)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(5,470)	(689)	(6,159)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(59,180)	(7,759)	(66,939)
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	3,800	34,600	442	38,842
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,800	29,130	520	33,450
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,800	23,660	1,584	29,043

Հիմնադրամի հիմնական միջոցների վրա չկա որևէ սահմանափակումներ: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 9,276 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ունեն զրո հաշվեկշռային արժեք (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,812 հազար դրամ):

11 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր և արտոնագրեր	Վեր կայք	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	1,831	2,600	4,431
Ավելացում	-	-	-
Օտարում	-	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,831	2,600	4,431
Ավելացում	-	-	-
Օտարում	-	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,831	2,600	4,431
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	(1,831)	(27)	(1,858)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(260)	(260)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(1,831)	(287)	(2,118)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(260)	(266)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(1,831)	(547)	(2,384)
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	2,573	2,573
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	2,313	2,313
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	2,053	2,053

Հիմնադրամի նոր վեր կայքը նախատեսված է Հիմնադրամի գործունեության մասին տեղեկատվության տարածման համար և ունի կայքի միջոցով օնլայն նվիրատվություններ ստանալու հնարավորություն:

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	567
Տրված կանխավճարներ	253	661
	253	1,228
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	1	2
Այլ դեբիտորական պարտքեր	243	1,458
	497	2,688

13 Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	3	3
Բանկային հաշիվներ	24,649	17,895
	24,652	17,898

14 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ոչ ընթացիկ</i>		
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	31,096	35,763
	31,096	35,763
<i>Ընթացիկ</i>		
Հետաձգված եկամուտ եկամուտներին վերաբերող շնորհներից	22,075	15,900
	22,075	15,900
Հետաձգված եկամուտ	53,171	51,663

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	51,663	42,873
Տարվա ընթացքում ստացված	317,445	83,978
Տարվա ընթացքում ճանաչված	(315,937)	(75,188)
	53,171	51,663

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	316	1,265
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների գծով	5	868
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	137	535
	458	2,668

16 Պահուստներ

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	638	296	-	934
	638	296	-	934

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	508	130	-	638
	508	130	-	638

17 Հետաշվեկշռային իրադարձություններ

2020թ. առաջին կիսամյակում նոր կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի արագ տարածումը խիստ ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհի գրեթե բոլոր պետությունների տնտեսությունների վրա: Մի շարք երկրներ, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, ձեռնարկել են միջոցառումներ, որոնք էական ազդեցություն են ունեցել ոլորտների մասնակիցների գործունեության վրա: COVID-19 պատճառով բազմաթիվ երկրներում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունում, բիզնեսները ստիպված են եղել ամբողջ ժամկետով դադարեցնել կամ սահմանափակել գործունեությունը: Վիրուսի տարածման դեմ ուղղված միջոցառումները, հանգեցրել են բիզնեսի էական խափանումների, հանգեցնելով տնտեսական աճի տեմպերի նվազման, ինչպես երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության ՀՆԱ-ի կրճատման:

Հիմնադրամը այս համաճարակը գնահատում է որպես հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտվող իրադարձություն, որի ազդեցության քանակական գնահատումը Հիմնադրամի վրա գործնականորեն հնարավոր չէ իրականացնել բավարար ճշգրտությամբ:

Ներկայումս Հիմնադրամի ղեկավարությունը վերլուծում է տնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

18 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

19 Ֆինանսական գործիքներ

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Հիմնադրամի ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ֆինանսական գործիքի յուրաքանչյուր տեսակի գծով սպեցիֆիկ տեղեկատվություն
- Ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման գծով տեղեկատվություն, ներառյալ դատողությունները և գնահատումների ամորոշությունները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և համարժեքներ	24,652	17,898
Առևտրային դեբիտորական պարտքեր	253	1,228
	24,905	19,126

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	316	1,265
	316	1,265

20 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

20.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Դեկավարության համոզմամբ դրամական միջոցների հետ կապված պարտքային ռիսկ չկա, քանի որ դրանք պահվում են հեղինակավոր առևտրային բանկերում:

բ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

21 Ֆինանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները և իրական արժեքի հիերարխիա

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Հիմնադրամի որոշ ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով: Հիմնադրամի ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի չափման համապատասխան գնահատման տեխնիկա:

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
	<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային դեբիտորական պարտքեր	253	253	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,652	24,652	-	-
	24,905	24,905	-	-
Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
Նկարագրություն	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
	<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	316	316	-	-
Ընդամենը	316	316	-	-
Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
	<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,688	2,688	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,898	17,898	-	-
	20,586	20,586	-	-
Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
Նկարագրություն	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
	<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,265	1,265	-	-
Ընդամենը	1,265	1,265	-	-

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- **1-ին մակարդակ՝** իրական արժեքները ստացվում են մանաստիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- **2-րդ մակարդակ՝** իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- **3-րդ մակարդակ՝** իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ կետերի և ֆինանսական գործիքների, որոնք, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, չափվել են վերագնահատված արժեքով կամ իրական արժեքով, ինչպես ներկայացված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

22 Պայմանականություններ

22.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը: Հիմնադրամի վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, վաճառքների, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Հիմնադրամի իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կամ խառնատեսակետով պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը,

ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, Ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

22.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ապահովագրական պայմանագրեր:

22.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում:

Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Հիմնադրամը գործում է, չի պահանջում, որպեսզի Հիմնադրամը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման գեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Հիմնադրամը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

23 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հոգաբարձուների խորհրդի անդամները, դոնոր ընկերությունները և հիմնական ղեկավար անձնակազմը:

23.1 Շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ին	դեկտեմբերի 31-ին
	ավարտված տարի	ավարտված տարի
	303,772	83,004
Ստացված շնորհներ	303,772	83,004

23.2 Գործարքներ ղեկավարության և նրանց ամփոջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2019թ.	2018թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	1,816	3,827
	1,816	3,827

24 Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվներ

Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվները իրենից ներկայացնում է Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների տարբերությունը, որն առաջացել է հիմնադիրների կողմից կանոնադրական նպատակների իրականացման համար իրականացված ծախսումների հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական ծախսերի ճանաչումից, որոնք ամփոջական առնչություն չունեն դրամաշնորհային ծրագրերի իրականացման շրջանակում դրամական միջոցների շրջանառության հետ: Մասնավորապես՝ աշխատակիցների չօգտագործած արձակուրդների գծով պահուստի ծախսի ճանաչումից: Ինչպես նշվել է ծանոթագրություն 2.1-ում ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով բացահայտվող տեղեկատվության օգտակարությունը սույն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար, Հիմնադրամի ղեկավարությունը նպատակահարմար է գտնում ներկայացնել հիմնադրին վերագրելի զուտ ակտիվների շարժը՝

Հազար դրամ	Հիմնադրին վերագրելի զուտ արդյունք
	320
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	-
Ավելացում	-
Նվազում	320
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	-
Ավելացում	-
Նվազում	320
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	-